Հարժիս

Բնակչություն՝ 831

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 90 կմ,
Հեռավորությունը Գորիս քաղաքից՝ 24 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ,

Հարժիսը (նախկինում՝ Յայջի) Սյունիքի մարզի հնագույն բնակավայրերից է: Այդ են վկայում գյուղում և շրջակայքում գտնվող քարայրերը, դամբարադաշտերը (մ.թ.ա. 1-ին հազարամյակ), գյուղատեղիները (10-18 դդ), եկեղեցիները, ամրոցը (10-18 դդ), հին կամուրջը (13-րդ դար) և բազմաթիվ խաչքարերով գերեզմանոցը:
Հարժիս գյուղի մոտակայքում է գտնվում 1343թ. կառուցված Հարժիսի (Յայջիի) քարավանատունը, որը միջնադարյան Հայաստանի նմանատիպ նշանավոր կառույցներից է:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 175 գյուղացիական տնտեսություն:
Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 5630 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5337 հա, որից՝
- վարելահող՝ 1154 հա, արոտ՝ 2218 հա, այլ հողատեսք՝1966 հա
- բնակավայրերի հողեր՝ 62 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա

- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝6 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 55 հա,
- անտառային հողեր՝ 159 հա, որից անտառածածկ՝ 159 հա
- ջրային հողեր՝ 6 հա